## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66-Հ2

## 27.07.2020Թ ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» «04» 2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱԼ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ավետիք Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020թ հուլիսի 27-ին կնքված N ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66 գլխավոր գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 18.03.21թ թիվ 353-Ն որոշմամբ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին գլխավոր Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3.2 կետով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ սահմանել՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90-րդ օրացուցային օրը ներառյալ:

1.1.2 Հաստատել պայմանագրով նախատեսված 2021թ համար առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման նոր օրացուցային գրաֆիկը համաձայն թիվ 1 հավելվածի:

1.1.3 Հաստատել պայմանագրով նախատեսված 2021թ կատարվող աշխատանքների համար նոր վճարման ժամանակացույցը համաձայն թիվ 2 հավելվածի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն<br>Ք. Երևան, Կառավարական տուն 2<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011033686<br>ՀՎՀՀ 02698732 | <<ԱԼ-ՄԱՍՔԱ>> ՍՊԸ<br>Ք. Մարտունի, Վ. Մամիկոնյան-5<br>ՀՎՀՀ 08207774<br>Հայբիզնեսբանկ ՓԲԸ, Ալաշկերտ մ/ճ<br>Հ/Հ 11500995959000 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝<br>---------------------- Վ. Գասպարյան<br>/ստորագրություն/ Կ.Տ | Տնօրեն՝<br>---------------------- Ա. Ավետիսյան<br>/ստորագրություն/ Կ.Տ |

*Հավելված N 1*
*«13» «04» 2021թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66-Հ2 ծածկագրով համաձայնագրի*

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՀՀ Սյունիքի մարզի Բնունիս համայնքի Սբ Աստվածածին եկեղեցու վերականգնման և մասնակի բարեկարգման աշխատանքների

| N | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետ | |
|---|---|---|---|
| | | Սկիզբ | Ավարտ |
| | 2021թ կատարման ենթակա աշխատանքներ | | |
| | Հարդարման և բարեկարգման աշխատանքներ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 90-րդ օրացուցային օրը ներառյալ: |
| | Ընդամենը 2021թ կատարման ենթակա աշխատանքներ | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը | համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 90-րդ օրացուցային օրը ներառյալ: |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

------------------------------Վ. Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

------------------------------------- Ա. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*«13» 04 2021թ. կնքված*
*ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/66-Հ2 ծածկագրով համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ. դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | |
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր (մինչև 30-ը) | Ընդամենը |
| 1 | 45451600-3 | Վերականգնողական աշխատանքներ | | | | 4619,726 | 4619,726 | 4619,726 | 4619,726 | 4619,726 | **4619,726** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

------------------------- Վ. Գասպարյան
/ստորագրություն/Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

------------------------- Ա. Ավետիսյան
/ստորագրություն/Կ.Տ